

Արդյո՞ք իրավասու եք որակավորվելու Golden State Stimulus-ին:

Ի՞նչ է Golden State Stimulus-ը:

Կալիֆոռնիան աջակցում է ցածր եկամուտ ունեցող բնակիչներին՝ միանվագ վճարելով 600 ԱՄՆ դոլար այն հարկատուներին, ովքեր իրավասու են Կալիֆոռնիայի Վաստակած եկամտահարկի արտոնությանը (CalEITC) 2020թ. հարկային տարվա ընթացքում: Իրականացվում է նաև 600 ԱՄՆ դոլարի չափով վճարում այն հարկատուներին, ովքեր իրենց հարկերը ներկայացնում են Հարկ վճարողի անհատական նույնականացման համարով (ITIN) և 2020թ.-ին վաստակել են 75,000 ԱՄՆ դոլար կամ դրանից պակաս:

Որպեսզի իրավասու լինեք որակավորվելու Golden State Stimulus-ին, ապա:

- **Ձեր՝ 2020թ. եկամուտը չպետք է գերազանցի 30,000 ԱՄՆ դոլարը:**
  Եթե 2020թ.-ին 30,000 ԱՄՆ դոլարից պակաս գումար եք վաստակել, դուք, հավանաբար, իրավասու կլինեք որակավորվելու Golden State Stimulus-ին: Այս հարկային սեզոնին անպայմանորեն դիմեք CalEITC-ի համար, որպեսզի իրավասու լինեք ստանալու ձեր GSS վճարումը:

  ԿԱՄ

- **Հարկերը ներկայացնում եք Հարկ վճարողի անհատական նույնականացման համարով (ITIN), և 2020թ.-ին 75,000 ԱՄՆ դոլար կամ դրանից պակաս գումար եք վաստակել:**
  Եթե ձեր հարկերը ներկայացնում եք Հարկ վճարողի անհատական նույնականացման համարով (ITIN), և եթե 2020թ.-ին վաստակել եք 75,000 ԱՄՆ դոլար կամ դրանից պակաս, ապա դուք իրավասու եք ստանալու 600 ԱՄՆ դոլար վճար, նույնիսկ եթե դուք իրավասու չեք որակավորվելու CalEITC-ին: Եթե ձեր հարկերը ներկայացնեք ITIN-ով և որակավորվեք CalEITC-ին 2020թ.-ին, հնարավոր է, որ ստանաք միանվագ 1200 ԱՄՆ դոլարի չափով վճարում: Իմացեք ավելին CalEITC-ին դիմելու մասին որպես ITIN ունեցող անձ:

- **Դուք պետք է ներկայացնեք ձեր հարկերը մինչև 2021թ. հոկտեմբերի 15-ը:**
  Եթե դուք ունեցել եք եկամուտ **2020թ.-ին,** և իրավասու եք որակավորվելու **CalEITC-ին,** ապա պետք է ձեր՝ **2020թ.** հարկային հայտարարագրերը ներկայացնեք մինչև **2021թ.** հոկտեմբերի **15-ը,** որպեսզի ստանաք ձեր **GSS** վճարը:.

- **Պետք է լինեք Կալիֆոռնիայի բնակիչ**
  Վճարման օրը դուք պետք է լինեք Կալիֆոռնիայի բնակիչ:

- **Պետք է լինեք 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:**

- **Մեկ այլ անձի հարկային հայտարարագրում չեք նշվում որպես խնամառու:**

Եթե դուք որակավորվեք CalEITC-ին, ապա դուք, հավանաբար, իրավունք կստանաք որակավորվելու Golden State Stimulus-ին:

GSS-ի և CalEITC-ի մասին ավելին իմանալու համար, այցելեք **CalEITC4Me.org**